№ 50 ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 12

1904

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 12 № 50

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դա պարտաւորութիւն է. Տիբեթի արշաւանքը—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ամերիկեան բեկլամը Ասիայում. Հայոց ներկայացումը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երկրպագուներ։

ԴԱ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ Է

Մի շարք յօդուածներով մենք ցոյց տուինք, որ Թոքախտի զարգացման և տարածման դէմ կարելի է աջող կերպով մաքառել, եթէ ձեռք առնվեն էական միջոցներ թէ ազատ պահելու ազգաբնակութիւնը թոքախտաբեր սաղմերից և թէ ոչնչացնելու այդ սաղմերը այնտեղ, ուր նրանք սկսել են բուն դնել և քայքայումներ առաջացնել։

Թիֆլիսում բացված հակաթոքախտային ցուցահանդէսը և դօկտոր Բլիմենտալի հետաքրքրական և ուսանելի դասախօսութիւնները ոչ միայն պարզում են, որ Թոքախտի դէմ կռուելը անհրաժեշտ է և պարտաւորական, այլ և հրամայաբար յանձնարարում են, որ այդ կռուի վրա մենք նայենք, իբրև հասարակական մի շատ կարևոր, մարդասէր և ազնիւ կռուի վրա, մաքառելով մի սարսափելի աղէտի դէմ, որ աւելի զոհեր է տանում մարդկութիւնից, քան ամենասարսափելի պատերազմները։

Մեր երկիրը իր բնական պայմաններով մեծ յարմարութիւններ ունի աջող կերպով հակաթոքախտային գործը կազմակերպելու։ Մենք ունենք հրաշալի լեռնային տեղեր ալպիական օդով, ընդարձակ ձորեր և հովիտներ, անտառային տարածութիւններ, հարաւային ծովափեր, բազմատատ արեգակնային լոյս, մի խօսքով այնպիսի պայմաններ, որոնց մէջ կարելի է անողոք կռիւ հրատարակել թոքախտի բացիլներին։ Սակայն մեր մէջ պակաս է կուլտուրական պատրաստականութիւնը՝ կազմակերպելու գործը բաւարար կերպով։ Մենք պէտք է սովորենք ընդհանուր գործակցութեամբ և փոխադարձ աջակցութեամբ գործեր կազմակերպել, մաքրասիրութեան և առողջապահութեան կանոնների վերաբերութեամբ ամենամեծ ճշդապահութիւն ունենալ, որոշ առողջապահական պարտաճանաչութեամբ առաջ տանել սկսած գործը։

Անկասկած, ամեն դժուար գործ սպասում է սկզբից թէ անձնուէր գործողներին, որոնք յանձն առնէին նեղութիւններ ու զրկանքներ և թէ նիւթական միջոցների, որոնք հեշտացնէին գործողների ջանքերը։ Մենք մի քանի անգամ հրաւէր ենք կարդացել հասարակութեան և անհրաժեշտ ենք համարում դարձեալ յիշեցնել, որ հասարակութիւնը իր կողմից պէտք է ամեն տեսակ դիւրութիւններ տայ կարևոր և անյետաձգելի գործը կազմակերպելու համար։

Դա անհրաժեշտութիւն է, դա պարտաւորութիւն է։

ՏԻԲԵԹԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Մեր ընթերցողներին յայտնի է, որ անգլիական զօրքերի մի գունդ գտնվում է Տիբեթում։ Այդ գունդը բռնել է մի որոշ դիրք և կանգ առել։ Նա, ճիշդ է, չէ շարժվում դէպի Տիբեթի խորքերը, բայց և չէ վերադառնում դէպի Հնդկաստան։ Թէ ինչ ծրագիրներ ունի անգլիացիների տիբեթեան արշաւանքը, դեռ ոչինչ կերպով յայտնի չէ։ Անգլիական մամուլի մի մասը այն կարծիքն է յայտնում, որ այդ արշաւանքը մի մեծ սխալ է և կարող է վտանգաւոր անպտղութեան հանդիպել, որովհետև Տիբեթի ազգաբնակութիւնը հաշտ աչքով չէ նայում անգլիական զօրքերի առաջխաղացութեան վրա և երկիւղ է կրում, որ Անգլիան կարող է հաստատել Տիբեթում մշտական վարչութիւն և մինչմտել Տիբեթի ներքին գործերի մէջ։

Մի բան աչքի է ընկնում, որ Անգլիան չափազանց զգոյշ է պահում իրան Տիբեթի վերաբերութեամբ և աշխատում է այնպիսի քայլեր չանել, որ սուր ընդհարումներ առաջ բերէ իր զօրքերի և տիբեթացիների մէջ, այլ կամաց-կամաց ընտելացնէ տեղացիներին իր ներկայութեան անհրաժեշտութեան հետ։ Բողդբխանի կառավարութիւնը գուցէ ներքուստ հաշտ աչքով չէ նայում Անգլիայի այդ առաջխաղացութեան վրա, բայց իր կողմից արգելքներ չէ յարուցանում, սպասելով այն ժամանակին, երբ նա բաւականաչափ ուժեղ կը լինի իր համակրութիւններն ու հակակրութիւնները պարզ կերպով յայտնելու համար։

Անգլիան, անկասկած, իր շահերի հոգսով զբաղված՝ ձեռնարկում է ամեն տեսակ նախազգուշութիւններ, որպէս զի կարող լինի ժամանակով նոր նուաճումներ անել իր առևտրի և ազդեցութեան համար. բայց անգլիական ժողովրդի մի խոշոր մասը երկիւղ է կրում, որ մի գուցէ անզգոյշ քայլերի շնորհով Ֆասավի անգլիական անունը Տիբեթի նման տեղերում և այդպիսով վտանգ առաջ գայ և այն տեղերի համար, ուր անգլիական ազդեցութիւնը ներկայումս ուժեղ է և աներկբայելի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

Մարդը սիրում է պատիւներ ստանալ իր նմանից, և չը կայ մարդկային կեցութեան մէջ մի աստիճան, սկսած ամենացածրերից, ուր բաւական խոշոր գործօնի դերը չը կատարէր պատուասիրութիւնը։ Ինքն ըստ ինքեան դա մի ցանկութիւն է, որ կարելի կը լինէր անմեղ անուանել, եթէ մէջտեղ պահվէր նախ փոխադարձութեան սկզբունքը, բայց ամենից շատ՝ չափի հասկացողութիւնը։ Պատել արժանաւորին—դա պատիւ է և պատուողի համար, մի առաքինութիւն, որ միայն անհատներին չէ բարձրացնում, այլ և հասարակութիւնները։ Բայց մարդկային բոլոր առաքինութիւնները կարող են հիւանդոտ կերպարանք ընդունել, երբ նրանք լաւ չեն հասկացվում, երբ չափազանցութիւնների են հասնում։ Ուրիշ բան է, երբ մարդը ուզում է, որ իր մարդկային անհատական արժանաւորութիւնները իրանց համապատասխան պատիւն ստանան, և ուրիշ բան է, երբ նոյն մարդը պահանջում է աւելի մեծ պատիւներ։ Փառամոլութիւնը նոյնքան ատելի մի արատ է, ինչպէս և ամեն մի յանցաւոր արատ։ Եւ դժբախտութիւնն այն է, որ իսկական, համեստ, արժանավայել պատուասիրութիւնը շատ հազուագիւտ երևոյթ է դառնում, մինչդեռ փառամոլութիւնը աճելով աճում է այնքան, որ հասնում է mania grandiosa անունով յայտնի հիւանդութեան։ Ի՞նչ տգեղ երևոյթներ ասէք, որ չը բղխեն այս հիւանդութիւնից։ Ամենից առաջ և ամենից շատ ստորանում է մարդկային իսկական արժանաւորութիւնը։ Մի մարդ իր ոյժերի չափով կարող էր օգտակար լինել հասարակութեան, արժանանալ մի յայտնի չափով պատուի, երախտագիտութեան։ Բայց նա մոռանում է բնութեան որոշած սահմանները, ընկնում է զառանցանքի մէջ և սկսում է այնպիսի չափազանցացրած, հրէշաւոր հասկացողութիւն կազմել իր ընդունակութիւնների մասին, որ ինքն իրան համարում է մի ինչ-որ կատարելութիւն, մի այնպիսի խոշոր տաղանդ, հանճար անգամ, որի համար քիչ են եղած պատիւները, որի վերաբերմամբ պիտի լինի ընդհանուր սքանչացում միայն։ Զը հաւանել նրան, հակաճառել նրան, նշանակում է մի ահռելի ոճիր գործել։ Հիւանդութեան ընթացքը երկարատև է, քայքայիչ. ինքն իրան ուռցրած, ինքն իրանից մի ինչ որ կուռք, պաշտամունք ստեղծած մարդը այլ ևս ոչ մի բանով չէ բաւականանում, այնքան անբնական դրութեան մէջ է ընկնում, որ սովորել, սխալը խոստովանել, աշխատել առաջադիմելու համար չէ կարողանում։ Եւ նրա համեստ ընդունակութիւնները, որոնք անպայմանօրէն գեղեցկուհին իր օտար լեզուով, կարծես, միանգամից խորթացաւ ինձ համար, կորցրեց իր ամբողջ հրապոյրը։ Բայց ես սխալված էի,—ահա թէ ինչ կարդացի ես նրա ծոցատետրում։

IV

«Նիցցա. 189**, Նոյեմբեր։ Երէկ լրացաւ երեք տարի այն օրից, երբ ես ամուսնացած եմ Տէրոյեանի հետ։ Տիկին Տէրոյեան... Աստուած իմ, մի ժամանակ ինչպէս քաղցր էր հնչում ինձ այդ ազգանունը, ինչպէս սիրում էի ես նոյն իսկ առանձին, մենակ ժամանակ կրկնել նրա ամեն մի վանկը, ամեն մի հնչիւնը. իսկ այժմ... կամաց-կամաց ես սկսում եմ ատել նրան, ատել նաև նրա ամեն մի վանկը, ամեն մի հնչիւնը. ես կուզէի, որ նա գոյութիւն անգամ չունենար աշխարհում։

Հը՛մ... գերմանացի ծերուկ պրոֆէսորը—այդ միակ սիրելի անձնաւորութիւնը իմ բոլոր շրջապատողների մէջ—ի հարկէ, չը գիտէ, թէ ինչպիսի դեր կատարեց իր հարևանուհու կեանքում. նա, անշուշտ, չէ էլ գուշակում, որ իր հաճելի, բովանդակալից խօսակցութեամբ, իր անդրդուելի համոզմունքներով, իր մաքուր ոգևորութեամբ, իր վառ աշխուժով՝ չը նայելով եօթանասնամեայ հասակին, ստիպեց ինձ մտածել մի այլ մարդու մասին, որի հետ ես կապել եմ իմ բաղդը և որ... զուրկ է այդ ամենից։ Զարհուրելի պատրանք. և ես նոր եմ տեսնում այդ... Բարի ծերուկ, նա, ինչպէս մի ժամանակ և ես, չէ ճանաչում իմ ամուսնուն։ Այսօր, վաղ առաւօտեան, լրագիրը ձեռքին նա վազեց մեզ մօտ և սկսեց կարդալ թարմ, յուզիչ լուրեր մեր հայրենիքից. նա համոզված է, որ մենք հետաքրքրվում ենք այն ամենով, ինչ վերաբերում է մեր ժողովրդին. նա չը գիտէ, որ մենք վաղուց թքել ենք և

ման օգտակար են հասարակութեան, կորչում են անհետ։

Ցաւալին այն է մանաւանդ, որ այս հիւանդութիւնը աւելի գրականութեան մէջ է տարածված։ Մանաւորապէս հայոց գրականութիւնը ներկայումս կատարեալապէս խեղդվում է այդ հիւանդութիւնից։ Մի խեղճ ու աղքատ պաշար է կարողանում նա հայթայթել հայ հասարակութեան։ Այստեղ հարկաւոր է աշխատանք, հարկաւոր են մարդիկ, գործողներ, որպէս զի կարելի լինի բարձրացնել գրականութիւնը, տալ նրան բազմակողմանիութիւն, թարմութիւն, կենսունակութիւն։ Բայց այդպիսի կենսատու գործունէութեան փոխարէն մենք տեսնում ենք փառամոլութեան ողորմելի ջանքեր, որոնք միայն արհամարհանք կարող են առաջացնել, տեսնում ենք մեր վերև նկարագրած հիւանդութեան այնպիսի տեսարաններ, որոնք միայն խղճահարութեան են արժանի։

Ահա ինչ բնորոշ փաստեր է հաղորդում Զմիւռնիայի «Արևելեան Մամուլ» շաբաթաթերթի Կ. Պոլսի թղթակիցը։

Յարութիւն էֆ. Մրմրեան, շրջաբերականով մը «հրաժեշտ» կուտայ բանաստիրական աշխարհին։ Որոշեր է վերջնականապէս մեկուսանալ հրապարակէն, որովհետեւ վերջերս զինք շատ «խծբծեր» են տարեկան տեսութիւններու մէջ։

Մենք երբէք պիտի չը հաւատանք թէ Մրմրեան էֆ. լրջօրէն յայտնած է այս որոշումը։ Ժամանակաւ լսեցինք որ Եղիա Տէմիրճիպաշեան, պաշտելի բանաստեղծը, Մօտայի հոսանքին տուաւ ինքզինք, եւ ուրիշ անգամ մը ալ Ջատկի օր մը, ցնցոտիներ հագած, Գատ գիւղի եկեղեցւոյն բակը կեցաւ, ցուրտէն դողդջուն, մեռելը անցորդներուն կարկառած, մուրացիկի մը պէս։ Եւ այս ամենը՝ գիտէ՞ք ինչո՛ւ, որովհետեւ նոյն ատենները, Տէմիրճիպաշեանի անունը ստէպ չէր յիշիրուեր, ու բանաստեղծն այս միջոցներուն գիմած էր, այնքան հանդիսաւոր օր մը, ամէն հիւրանոցներու մէջ իր վրայ խօսել տալու համար։ Նոյն մտածումը ունեցած է, պիտի ըսենք Մրմրեան էֆ.ի համար, որովհետեւ, այլապէս մոռնալ՝ շատ աննպաստ գաղափար պիտի տար իր նկարագրի մասին։*

Մրմրեան էֆէնդին մի բաւական յայտնի դէմք է Թիւրքահայ գրողների մէջ։ Եւ որքան մենք ծանօթ ենք Թիւրքահայերի լրագրութեան, այդ անունը համարեա միշտ գովասանքների, նոյն իսկ կոմպլիմենտների առարկայ է եղել։ Գիտենք արդէն, որ Կ. Պոլսի լրագրական ասպարէզում եթէ մի բան հաւածված է ու անտես արված, դա խիստ և անաչառ քննադատութիւնն է։ Մի քանի ժամանակ առաջ մենք խօսում էինք այն ախտի մասին, որ տարածված է Կ. Պոլսում և որի անունն է «իրերագովութիւն»։ Այսպիսի մի մթնոլորտում ինչը կարող էր այնքան դիպչել Մրմրեան էֆէնդիի ահագին ինքնասիրութեան։ Անշուշտ մի շատ թեթև, շատ անմեղ բան է։ Եթէ նոյն իսկ ենթադրենք հակառակը, դարձեալ նրա շրջաբերականը, գրականութիւնից հրաժարվելը ինչ որ խծբծանքների համար, մի հրէշաւոր երևոյթ է։ Ինչ վերաբերվում է միւս, «պաշտելի» (?) գրողին, Եղիա Տէմիրճիպաշեանին, նա արդէն վաղուց յայտնի է իբրև գրեւացաւով հիւանդ մի մարդ, որ ամեն բան և ամեն ինչ անում է, բայց չէ կարողանում գրողի տաղանդ ցոյց տալ։ Ինչ էլ, սակայն, լինէր այդ մարդը, երբէք չէր կարելի հնթադրել թէ բէկլամ անելու մէջ նա այնքան մեծ ճարպիկութեան կը հասնէր։ Ոչ մի ամերիկացի չէ կարող նրա դափնիները խլել բէկլամի ասպարէզում։

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԲԵԿԼԱՄԸ ԱՍԻԱՅՈՒՄ

—

«Русск. Вѣд.» լրագրում կարդում ենք հետեւեալը (№ 65, մարտ 6) որ քաղված է Լօձի մի լրագրից։

Թաղիեվի Կովկասեան ակցիոներական ընկերութեան չթի գործարանը Բագուում որոնում է մեծ թւով փորձված ջուլհակներ։ Վարձատրութիւնն աւելի է, քան Մոսկվայի և Ռուսաստանի միւս գործարաններում։ Բանուորներն ստանում են բնակարան, վառելիք և լուսաւորութիւն։ Գործարանի մօտ կայ բաղանիս և բանուորների երեխաների համար դպրոց, խանութ՝ ուր ծախվում են բոլոր պիտոյքները չափաւոր գներով, և այդ բոլորի համար ամեն մի բանուորը վճարում է ամսական մէկ ռուբլի։ Բանուորների երեխաներին ընդունում են գործարան իբրև աշակերտներ. ճանապարհածախսը տալիս են Լօձում, իսկ յետոյ վարձատրից հանում են աստիճանաբար՝ չափաւոր գումարներով, համաձայն գործարանական ինսպեկցիայի ցուցումների։ Մանրամասն պայմանների մասին տեղեկանալ այս ինչ տեղում»։

Ահա մի «Արկադիա», մի «Ելիսեան դաշտ», մի փոքրիկ դրախտ խեղճ ու կրակ աշխատաւորի համար։

Կայ և բաղանիս, և դպրոց մանկիկների համար. և՛ վարձատրն էլ բարձր ռուսական միւս գործարաններից... կայ և խանութ, բարեխղճութեամբ առևտուր անող մի չը տեսնված խանութ։

Էլ ի՞նչ կարելի է ցանկալ կովկասեան ասիական մի խուլ անկիւնի համար։

Բայց ահա և մեղալի միւս կողմը։

«Glos» լրագրի Բագուի թղթակիցը նկատում է, որ այդ յայտարարութիւնը բոլորովին չէ համապատասխանում ճշմարտութեանը։

«Այստեղի (Բագուի) ջուլհակները ամսական 16—20 ր. են վաստակում—մի վարձագին՝ որ շատ աւելի պակաս է, քան Մոսկվայի և Լօձի գործարաններում եղածը։ Բանուորների համար բնակարանը կազմված է մի ընդհանուր շէնքից՝ առանց տախտակէ յատակի, որը և պահպանվում է մի զարհուրելի—իսկապէս ասիական կեղտոտութեան մէջ։ Այդ շէնքի մէջ են տեղաւորվում և ամուրի, և՛ ընտանեւոր բանուորները ընտանիքներով միասին։ Բաղանիս կայ, բայց մի բաղանիս, որի մէջ ձմեռը նստել կարելի է միայն կիսամուշտակ հագած։ Դպրոցը նոյնպէս գոյութիւն ունի, բայց առանց ուսուցչի, և այժմ նա ծառայում է իբրև բնակարան թուրք բանուորների համար։ Իսկ ինչ վերաբերում է խանութին՝ նրանում ապրանքների գները չափազանց բարձր են, և նոյն իսկ որակի մասին էլ կարելի էր շատ բան ասել։ Գործարանը շինված է անապատի մէջ, քաղաքից 12 վերստ հեռու, և բանուորը, —ուզէ՝ չուզէ—ստիպված է դիմել այդ խանութին, բոլոր ուտելիքներին վճարելով բարձր գներ»։

Ահա մերկ իրականութիւնը։ Ինչպէս տեսնում էք, խոստումը, ամերիկական բեկլամն ու ասիական իրականութիւնը իրարից բաւական տարբեր են եղել։

Բեկլամն ունեցաւ իր հրաշագործ հետևանքները։ 160 ջուլհակներ Բագու եկան։ Դրանցից 20-ը ընտանիքով ծանրաբեռնված մարդիկ են։

Լօձի համեմատաբար կուլտուրական բանուորի համար Բագուի թթթարական պայմանները դարհուրելի են երևացել։ Տեղի են ունեցել բաւական խոշոր տաբաձայնութիւններ պ. Թաղիեվի գործարանի վարչութեան և եկած աշխատաւորների մէջ։

Եկողներից 18 հոգի միայն կարողացել են տեղաւորվել, իսկ մնացածների բաժինը եղել է փողոցի աւազը. 100 հոգի ոտով ճանապարհ են ընկել դէպի Իրանց ծննդավայրը։

Ներկայումս այդ ջուլհակներից 40-ից աւելի հոգի, ոմանք նոյն իսկ ընտանիքներով՝ մնացել են անգործ—ուրեմն և սոված։

Ահա ամերիկեան բեկլամը Ասիայում գժբաղդութիւն է, երբ քաղաքակրթված ձևերը երեսանց իւրացնում են ոգէտ ասիացիները։

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

—

Շատ ծափ ու շատ ծիծաղ, ահա հաշուեկշիռը մարտի 9-ի ներկայացման, որ տեղի ունեցաւ ի նպաստ պ. Վրոյրի վրաց ազնուականների թատրոնում։

Ագահի դերը կատարում էր ինքը՝ բենեֆիցիանտը, որը կարող ենք Մոլիէրի գործերի լաւագոյն թարգմանիչներից մէկը նկատել հայ բեմի վրա։ Պ. Վրոյրի յաղթանակը, անկասկած, աւելի մեծ պիտի լինէր, եթէ նա մեզ ներկայացնէր մի Հարպագոն՝ ժլատ՝ ոչ միայն իր բնաւորութիւնով, այլ և իր շարժմունքներով ու ձևերով՝ ժէստերով։ Զափաւորութեան մտահոգութիւնը ամենից աւելի կոմիկ դերասաններին պէտք է զբաղեցնէ, որովհետև, հակառակ դէպքում կոմէդիան կը դառնայ զաւէշտ, ֆարս։ Իսկ Մոլիէրի գործերը՝ բարքերի կատակերգութեան և նկարագիրների կատակերգութեան գլուխ-գործոցներ՝ որ և է կատակերգութիւնից առաջ են պարունակում զաւէշտի տարրեր։ Արտիստը երբէք պէտք չէ իր արուեստը, իր մտածված խաղի նրբութիւնները զոհէ ամբոխի ճաշակին, որը բնականաբար աւելի խեղկատակ, զաւէշտական ձևերին, քան ծիծաղին է սիրահար, քան չափաւոր, ներգաշնակ ժէստերին ու նուրբ ժպիտին։

Կօկլէն կրտսեր՝ Մոլիէրի կատակերգութիւնների ժամանակակից ամենատաղանդաւոր ֆրանսիացի թարգմանը, ամենից աւելի դիմախաղի, միմիկայի ոյժով էր ստիպում հանդիսականների ծիծաղը։ Բարեբաղդաբար, պ. Վրոյր շատ հարուստ միմիկա ունի. ու եթէ ձայնի չափազանց բարձրացումներից ու շարժումների յաճախակի ոգևորութիւնից մի քիչ խոյս տայ, ապահովաբար նրա մտածված խաղը շատ պիտի շահի արուեստի և տպաւորութեան տեսակէտով։ Միւս դերակատարներից պ. Ալիխանեան վատ չէր Կլէանդրի դերում և արժէր յիշատակել պ. Աւետեանին էլ, խոնարհ Ժակի դերում, եթէ շնորհալի դերասանը չը փորձվէր երբեմն կոմիկը շփոթել ծաղրածուի հետ։ Թատրոնը բոլորովին լիքը չէր։

Տիգրան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Էջմիածնից մեզ հաղորդում են, որ ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը մարտի 6-ին գրված մի կօնդակով յանուն Ատրպատականի թեմի առաջնորդական փոխանորդի և խորհրդարանի, հրամանագրել է շուտով ձեռնարկել թեմական պատգամաւորների ընտրութեան՝ առաջնորդ ընտրելու համար, համաձայն անցեալ տարի հաստատված թեմական կանոնադրութեան։ Այդ առիթով Թաւրիզից հաղորդում են մեզ, որ վերոյիշեալ պատգամաւորների ընտրութիւնը կը կայանայ ապրիլին. յարմար կանդիդատներ առաջնորդութեան համարվում են Մեսրոպ, Կարապետ, Մատթէոս և Բագրատ վարդապետները։

—

Մեզ խնդրում են յայտնել, որ հակաթոքախտային ցուցահանդէսը այս կիրակի՝ առաւօտեան ժամը 9—12-ը ձրի կերպով կը բացվի արհեստաւորների, բանուորների և ուրիշ խեղճ դասակարգերի համար, որոնք նոյն իսկ 20 կոպէկ վճարելու անընդունակ են։ Վերջին օրերս ցուցահանդէսը յաճախողների միջին թիւը 250—300 հոգու։

—

Լսում ենք, որ առաջիկայ կիրակի օրը, ժամը 12½-ին հակաթոքախտային ցուցահանդէսի մասնաժողովը կազմակերպում է մի հանրամատչելի դասախօսութիւն դպրոցական սանների համար միայն՝ նիւթ ունենալով թոքախտը։

—

մեր ժողովրդի և նրա վիճակի վրա։ Ծերունին կարդում էր լուրերը վրդովված. երբեմն ձայնով և նրա աչքից կաթ-կաթ վազում էր արտասուքը։ Ես ևս չը կարողացայ զսպել ինձ. —լուրերը, յիրաւի, տխուր էին։ Պրոֆէսօրը կարդաց, վերջացրեց, ծալեց լրագիրը, դրեց մի կողմ ու երկար և ոգևորված խօսեց այդ լուրերի մասին։ Երբ նա շանթեր էր արձակում դողդոջուն շրթունքներից, ես դիտում էի իմ ամուսնուս... գոնէ մի մկնակ շարժվէր նրա սառն ու անտարբեր դէմքին, գոնէ մի ձևական ափսոսանք յայտնէր նա իր կողմից... Գահաւորակի վրա անհոգ թեք ընկած՝ նա ծխում էր և յօրանջում. նա անշուշտ մտածում էր այն զբօսանքի մասին, որ մենք պէտք է կատարէինք այս երեկոյ։ Ինձ թւում է, որ պրոֆէսօրը նկատեց ամուսնուս վարմունքը և ապշեց, ինչպէս ապշեց մի օր՝ տեսնելով, որ մենք իրար հետ խօսում ենք ոչ մեր մայրենի լեզուով։ Մայրենի լեզո՞ւ,—դա մի չինարէն է ամուսնուս համար, իսկ ես... համարեա մոռացել եմ նրան։

V

*«Նիցցա. 189**, դեկտեմբեր։ Մենակ եմ, մենակ ամբողջ աշխարհում. ուրիշ հնար չը կայ, պէտք է դիմել կրկին յիշատակարանին. այդ անլեզու, անմռունչ թերթերը շատ անգամ աւելի լաւ խօսակիցներ են, քան իմ ամուսինը և նրա բազմաթիւ ծանօթները—իմ երկրպագուները։—Երկրպագուներ, գարշելի կենդանիներ. ինչպէս ատում եմ ես նրանց։ Նրանց կոկված ու յղկված դէմքերի վրա, նրանց շինծու ժպիտների, նրանց խլզոտ աչքերի, նրանց երկմիտ հաճոյախօսութիւնների մէջ ես մի բան եմ տեսնում միայն—մի ստոր, զզուելի կիրք, մի անասնական ցանկութիւն՝ հաղիւ քօղաբկված ու զսպված գազանային սրտերում։ Օ՜, անարգ արարածներ, ես ձեզ չեմ տայ իմ մարմինս յօշոտելու... Մի անգամ, գէթ մի անգամ ոչ ոք նրանցից չը խօսեց ինձ հետ, ինչպէս մարդ, որ ընդունակ է տեսնել և մի ուրիշ բան, բացի մարմնից. չէ՞ որ նրանց աչքում ես լոկ մի գեղեցիկ կին եմ և ոչ մարդկային էակ, որ կարող է ունենալ իր մարդկային մտածմունքները, իր ներքին ցաւերը, իր ձգտումներն ու երազները։ «Կինը ստեղծված է սիրելու և սիրվելու համար»—ահա այն ատելի բանաձևը, որի մէջ դարեր առաջ ամփոփել են նրանք մեր գոյութիւնը և որին երկրպագում են անխափան։ Բայց որքան թանգ է նստում կնոջն այդ սէրը... պէտք է հարցնել նրանց, որոնք մի անգամ սիրել ու հոգով-մարմնով անձնատուր են եղել սիրած տղամարդուն։*

Կային օրեր... սիրում էի և ես... սիրում էի իմ ամբողջ հոգով, իմ ամբողջ էութեամբ, որպէս սիրում են, գուցէ, շատ քչերը։ Իմ ծնողներս հարուստ էին. ամուսնութեան մէջ Տէրոյեանի հետ ես չէի որոնում ոչ աշխարհային վայելք, ոչ կենսական ապահովութիւն, ոչ հռչակ ու անուն և ոչ մինչև անգամ ընտանեկան զուարճութիւններ։ Ես որոնում էի մի ընկեր, մի ամուր նեցուկ, որի հետ կարողանայի անցնել կեանքի ճանապարհը և ես չէի ուզում իզուր անցնել այդ ճանապարհով... Երազներ, միամիտ ցնորքներ... Ես տուի Տէրոյեանին իմ ամբողջ էութիւնը, տուի նրան լիուլի այն ամենը, ինչ որ կարող է տալ մի սիրող ու անձնուրաց կին և ոչինչ չը ստացայ դրա փոխարէն. ես չը գտայ նրա մէջ այն ընկերը, որ որոնում էի այնքան յամառ կերպով, գտնելու այնպիսի ջերմ ցանկութեամբ։

Կեանքը սահում էր արագ-արագ. նրա անհանդարտ պտոյտ-փոթորիկների մէջ կամաց-կամաց մոռացվում էին իմ որոնումները, որպէս անապատի փոշի ցրվում ու ցնդվում էին իմ ձգտումները և ես, նոյն իսկ ինձ համար անկատելի կերպով, իջնում էի վայր, միշտ դէպի վայր... Եւ երբ մի օր, տարիներ անցնելուց յետոյ, ես բացի իմ աչքերս և կամեցայ հաշիւ տալ ինձ իմ անձնական—անհատական կեանքի մասին, զարհուրանքով տեսայ, որ ես չունէի այդպիսի կեանք. ես լոկ մի սեփականութիւն էի ամուսնուս ձեռքին, մի գեղեցիկ սիրուհի, որի հետ նա խաղում էր այնպէս, ինչպէս կամենում էր։ Ես ընդօրինակել էի մինչև անգամ նրա աշխարհահայեացքը, նրա զգացմունքները, նրա սովորութիւնները, նրա լեզուն, նրա գործածած բառերն ու դարձուածքները։ Իմ անձնականից, ըստ երևոյթին, չէր մնացել ոչ մի հետք... Մի քանի տարվայ այս ամուսնութիւնը մի սարսափելի երազ էր, իսկ արթնացումը աւելի ևս սարսափելի...

Երէկ առաւօտ, երբ անքուն գիշերից և կուսական վաղուց անցած օրերի մասին երկար, երկար մտածելուց յետոյ, ես նայեցի հայելուն,—ոչ այնպէս, ինչպէս նայում էի ամեն առաւօտ՝ սեփական գեղեցկութեան փայլով հիանալու գաղտնի ցանկութեամբ,—այլ որպէս մի կողմնակի դիտող, մի խիստ դատաւոր,—ինչպէս ապշեցի տեսնելով իմ... անծանօթ դէմքը։ Դա, յիրաւի, մի հարճի դէմք էր, ոչինչ աւելի։ Այդ բարձր, գեղեցիկ, փայփայված ճակատը չունէր իր վրա մտածմունքի ոչ մի հետք. այդ մեծ, սև, փայլուն աչքերի մէջ, կարծես, վաղուց հանգած էր սրտի և հոգու կրակը. լիք, փափուկ, անգոյրի հաղիւ նկատելի նշաններով տեղ-տեղ ծածկված այտերն ու վառ կարմիր շրթունքները, կարծես, ստեղծված էին միայն հաճոյքներ տալու և առնելու համար... Ես երկար նայում էի հայելուն... Սև, երկայն, առատ մազերի շրջանակի մէջ իմ առաջ կանգնած էր կանացի մի շքեղ մարմին, որ ունէր ամեն ինչ գրաւելու և շլացնելու համար, բայց չունէր մի բան միայն... հասարակ, սովորական մարդու նմանութիւն... Օ՜, սէր, ամուսնութիւն, ի՞նչ արիք դուք ինձ...

Տարիներ առաջ, երբ իմ հայրենական տանը, իմ կուսական առանձնարանում, ես երազներ էի տեսնում ամուսնական երջանիկ կեանքի մասին, երբ ես մի նախագուշակ հաճոյքով, սրտի մի անչափ դուրեկան թրթիռով մտածում էի՝ ձեռք ձեռքի տուած իմ ապագայ ամուսնու հետ անձնատուր լինել մի օգտակար գործի, մի պարտք վճարելու այն բազմակարօտ ժողովրդին, որի մէջ ես ծնվել էի և որի ցաւերն ես զգում էի իմ դեռ ևս մաքուր, անարատ սրտով,—ով կարող էր կարծել, որ կը գայ օր, երբ ես մի Տէրոյեանի համար կը մոռանամ և հայրենիք, և լեզու, և ժողովուրդ և, իբրև միջազգային անհայրենիք պրոտաբոյծ, կը սկսեմ թափառել աշխարհից աշխարհ, մի ազմկալի քաղաքից դէպի միւսը, ծովային մի լոգարանից դէպի երկրորդը, երրորդը, և այսպէս անվերջ, լոկ կենսական խուսափող վայելքների հետևից ընկած... շրջապատված երկրպագուների խմբերով...

Եւ այս ամենը ես քեզ եմ պարտական, սիրելի ամուսին. դու սպանեցիր իմ մէջ մարդը, իմ ինքնուրոյնութիւնը, և իմ դիակիս վրա հիմնեցիր քո երջանկութիւնը։ Շնորհակալ եմ, անչափ շնորհակալ... Բայց միամիտ եղիր. կը գայ և այնպիսի օր, երբ այն, ինչ դու անկարելի ես համարում, կարելի կը դառնայ. կարծեցեալ դիակը յարութիւն կառնի և կը հիմնէ իր սեփական, անկողոպտելի երջանկութիւնը։

(Կը շարունակվի)

Թիֆլիսի զանազան դպրոցների աշակերտները և աշակերտուհիները իրանց վարչութիւնները բերում են խմբերով Արտիստական ընկերութեան շինութեան մէջ բացված հակաթոքախտային ցուցահանդէսը։ Այնտեղ հերթապահ բժիշկները դասատուների օգնութեամբ բացատրում են սաներին ներկայ մարդկութեան այդ մեծ թշնամուն վերաբերող շատ հանգամանքներ։ Աւելորդ է ասել, թէ որքան օգուտ է դա դպրոցների սաների համար։ Բացի օգուտ է դա դպրոցների սաների համար։ Բացի դրանից քաղաքում նկատված են հիւանդութեան 37 դէպքեր, որոնցից բծաւոր տիֆ 2, որովայնային տիֆ 2, ծաղիկ 6, կարմրուկ 4, քութէշ 8, դիֆտերիտ 13, թոքախտ 2։

—

Քութայիսի քաղաքային վարչութիւնը, դիմելով Թիֆլիսի քաղաքային վարչութեանը, խնդրում է վերջինիս ուղարկել այն կանոնները, որոնցով քաղաքային վարչութեանն է յանձնվում անատակութեան վրա հսկողութիւնը և, ի միջի այլոց, այն նախագիծը, որ այդ հարցի մասին կազմել է սանիտարական տեսուչ բժիշկ Ստեփանեան։

—

«Нов. Вр.» լրագիրը հաղորդում է, որ հաղորդակցութեան ճանապարհների մինիստրութիւնը վճռել է ձեռնարկել մի շարք աշխատանքներ ընդհանրապէս Կովկասի և մասնաւորապէս նրա Սև-ծովեան ափերի լեռնային գետերի ու գետակների ուժը մեքենաներ դարձնելու տեսակէտից։

—

Հակաթոքախտային ցուցահանդէսի մասնաժողովը յայտնում է մի շատ գովելի ցանկութիւն. լաւ կը լինէր, եթէ տանտէրերը կիրակի օրը (ժամը 9—12-ը) ուղարկէին ցուցահանդէս բոլոր տնական ծառաներին, որոնք ընդհանրապէս զրկված են մեզում ամեն տեսակ ուղեղ զարգացնող հասարակական ժողովներից։

—

Մարտի 10-ին Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների դերեկտորը հաղորդեց Թիֆլիսի քաղաքային վարչութեանը, որ քաղաքի դպրոցների երգեցողութեան դասերի համար վարժուհի ընտրված օր. Տէր-Գրիգորեանցը չէ հաստատված այդ պաշտօնում։

—

«Нов. Вр.» լրագիրը հաղորդում է, որ Սալատովի նահանգական զեմստվոն որոշել է հրատարակել մի շարք ժողովրդական գիւղատնտեսական գրքոյկներ՝ էժան գներով։ Ներկայումս զեմստվոն հրատարակել է (10,000 օրինակ) Ն. Տ. Իւրինի գրքոյկը—«Գիւղական գիւղատնտեսական ընկերութիւններ» խորագրով։ Դիտաւորութիւն կայ շուտով հրատարակելու մի քանի գրքոյկներ հետևեալ հարցերի մասին։ «Վարկային ընկերութիւններ» և «Սպառող ընկերութիւններ»։ Այդ մասին գրքոյկներ գրելու կամ կազմելու գործը յանձնված է նոյն պ. Իւրինին։

—

Թիֆլիսի պ. ոստիկանապետը յայտնում է քաղաքային վարչութեան, որ Թէլաւի գաւառապետը տեղեկացնում է, որ Կարաչալի գիւղում անասուններին ժանտախտ է երևացել։

—

«Русь» լրագրին հեռագրում են Խարկովից, որ ներկայ տարվայ ապրիլի կէսերից կը սկսվի այնտեղի համալսարանի բժշկութեան ուսանողների արագացրած քննութիւնը։ Այս տարի քննութիւններն ու դիպլոմները տալն արագացնում են, որպէս զի նոր-աւարտ բժիշկների թիւը շատանայ՝ ժամանակի ստիպողական պահանջին բաւականութիւն տալու համար։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Կիրակի, փետրվարի 29-ին, գտնվելով «Ճզղլար» գիւղում, մենք ականատես եղանք մի արտասովոր երևոյթի. երեկոյեան մօտ ժամը 6-ին յիշեալ գիւղին կից բարձր քարափի գլխից, պարզ կապտագոյն երկնակամարում լուսնի մեծութեամբ արիւնագոյն մի գունդ երևաց, որը հաւասար ուղղութեամբ երկնքում սլանալով, սկսեց աստիճանաբար, մօտ երկու սաժէնի չափ երկարանալ և կրակի գոյն ստանալ, և այդպէս քիչ տարածութիւն գնալով, ցրվեց և մանր փայլփլուն աստղիկների պէս վայր թափվեց։ Այդ բոլոր գործողութիւնը տևեց մօտ երկու բոպէ։ Գիւղացիք ահ ու սարսափի մէջ ընկան ու սկսեցին հազար ու մի տեսակ գուշակութիւններ անել. կտուրներում կանգնած երեխաները վախից աղաղակեցին»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Նորերս, ցերեկով՝ կիսամերկ դրութեան մէջ խեղդված դատ մի սերարոյական կնոջ, որը յայտնի էր «Հօլօս» (Հռիփսիմէ) անունով և իր բնակութեան առանձնարան էր ընտրել՝ քաղաքից դուրս, համարեա մի անմարդի փողոցի վերջին տունը։ Մարդասպանները երևի խեղդելուց յետոյ՝ վերցրած են նրա գլխի շէրիտը (ոսկէշաղ) և խուզարկել արկղները։ Ոստիկանութիւնը սկսել է իր գործը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Հեռաfրfիr տեղեկութիւններ։ Տօկիօից պաշտօնապէս հաղորդում են, թէ պատրաստի պատերազմական ֆօնդը հասնում է 576 միլիօն իէնի։ Ներկայումս դրանից արդէն ծախսված է 60 միլիօն։ Անգլիական լրագիրների թղթակիցները ասում են, թէ հաւանական է, որ շուտով եապօնական զօրքը յարձակողական գործողութիւններ կը սկսէ։ «Daily Chronicle» թերթի ասելով, եապօնացիները մտադիր էին այս մարտի 8-ին յարձակվել Նիւ-Զուանի վրա։ Բոլոր գետերը հիւսիսային Կորէայում արդէն բացվել են։ Ռուսական վերջին գնդերը անցել են Եալու գետի աջ ափը, ուր այժմ կենտրոնացված է Անդունից դէպի հիւսիս մօտ 20,000 հոգի։ «Daily News» հաղորդում է, որ գեներալ Կուրոպատկինը կը գնայ շտաբի ուղեկցութեամբ Տօկիօից պատերազմի բեմը, ուր նա կընդունի եապօնական զօրքի հրամանատարութիւնը։ Ենթադրում են, որ եապօնական զօրքի ընդհանուր յարձակումը կը սկսվի ապրիլի սկզբին։

«Standard»-ին հաղորդում են Տօկիօից, թէ կայանալու է բոլոր այն քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչների ժողովը, որոնք վճռել են լայն աջակցութիւն ցոյց տալ կառավարութեան ֆինանսական ծրագրին։ Վիճաբանութիւնների ժամանակ, սահմանադրականները մի ամբողջ շարք մեղադրանքներ հանեցին կառավարութեան դէմ, յանդիմանելով նրան լուրջ սխալների համար ներքին և արտաքին քաղաքականութեան մէջ։ Առաջադիմական կուսակցութեան ներկայացուցիչները արտայայտեցին այն համոզմունքը, որ Եապոնիան կը յաղթանակէ, իսկ նախկին մինիստր-նախագահ Մատին նոյն իսկ ձևակերպեց այն պահանջները, որ Եապոնիան պէտք է առաջարկէ յաղթութեան դէպքում։

Կօրէայից հաղորդում են, որ ազգարնակութիւնը այդտեղ հանդարտ է։ Եապօնական դեսպանի խօսքերով, Սէուլում անձրևներ են գալիս։ Բէֆօրմների կուսակցութիւնը Կօրէայում համակրում է Անգլիային և Ամերիկային, բայց կաշառված բարձր պաշտօնեաների մի ամբողջ շարք դէմ է այդ բէֆօրմների մտցնելուն։

Т. А.

Եապօնացիներ Կորեառում։ Բերլինի լրագիրներին հեռագրում են Սէուլից, որ կօրէական քաղաքական գործիչները, այցելելով մարկիզ Իտօին, ցոյց են տալիս նրան արքայական պատիւներ։ Կօրէական կայսրը բացարձակ կերպով կատարեալ վստահութիւն է ցոյց տալիս մարկիզի խորհուրդներին։ Ռուսաստանի հետ բարեկամութեան կողմնակիցները գրեթէ բոլորը անհետացել են, երկուսը նրանցից փախել են ամերիկական նաւերով։

«Бирж. Вѣд.»

Ռուսների կորուստը։ «Echo de Paris» լրագրի ասելով, ռուսաց արտաքին գործերի մինիստրը հեռագրել է Պարիզ, որ ֆրանսիական մինիստրութիւնը ստորջրեայ հեռագրաթելով խնդրէ Տօկիօի իր դեսպանից իմանալ եապօնական ծովային վարչութիւնից, թէ արդեօք կենդանի՞ են մնացել այն 4 օֆիցերները, որոնք գտնվում էին «Ստերեգուշչի» ականանաւի վրա, որը, մարտի 10-ին, Պօրտ-Արտուրի կուռ ժամանակ, ջրասոյզ է եղել։ Դեռ պատասխան չէ ստացվել։ Սակայն եապօնացիները արդէն սկսել են խոստովանել, որ նրանք կոտորել են «Ստերեգուշչիի» վրա ծառայողներին։ Սասեբօ հասած նաւաստիները ասում են, որ «Ստերեգուշչիի» վրա մնող առաջին եապօնացի նաւաստին յարձակվեց ռուսաց ականանաւի հրամանատարի վրա, որ դուրս էր գալիս իր խուցից։ Նրանք երկուսն էլ միմեանց վրա յարձակվեցին. եապօնացին կարողացաւ հասցնել ռուս օֆիցերի գլխին վէրք դանակով, այնպէս որ նա ընկաւ։ Օգուտ քաղելով այդ վայրկենից, եապօնացին հրեց նրան ծովը։

(Р. Д.)

Անգլիացիները այլ կարծիք են յայտնում։ «Daily Neues» լրագիրը հաղորդում է, թէ Պաուենել, որ մինչև այժմ կատաղի եապօնասէր էր, յանկարծ սկսել է խոստովանել, որ Եապոնիայի յաղթութիւնը աւելի վտանգաւոր է Անգլիայի համար, քան Ռուսաստանի յաղթութիւնը։ Ոչ թէ Ռուսաստանը, այլ Եապոնիան կը վերածէ Չինաստանը պատերազմիկ դեղին թագաւորութեան, որը կը սպառնայ բրիտանական տիրապետութեան Հնդկաստանում։ Պաուենել, որ դեռ նորերս ջատագով էր անգլո-եապօնական դաշնակցութեան, անուանում է այժմ այդ դաշնակցութիւնը սխալ։ Եապօնացիները օգուտ են քաղում նրանից և գործում ի վնաս Անգլիայի։

Էդուարդ VII թագաւորի քարտուղարը հաղորդել է Վիէննայի «Tageblatt» թերթի աշխատակցին, թէ թագաւորը սաստիկ ցանկանում է, որ բոլոր երկիրների մամուլը միանայ այժմ և բարեկամութիւն քարոզէ ազգերի մէջ. թագաւորը մեծ նշանակութիւն է տալիս զանազան երկիրների մամուլի լեզուին ներկայ հանգամանքներում։

(Рус. Вѣд.)

Ռուսական ծրագիրը ճակատամարտի մասին։ Արտասահմանեան մամուլը սիստեմատիքաբար քննում է ճակատամարտի ռուսական ծրագիրը։ Անվում են ամեն տեսակ դատողութիւններ, իսկ եզրակացութիւնները՝ անհնարին են լինում։ Սակայն վերջերս անգլիական մամուլը յայտնում է և նպաստաւոր կարծիքներ ռուսաց ջանքերի և աջողութիւնների մասին։ «Daily Mail»-ի թղթակիցը Նիւչժուանից գրում է. «Այն օրից, երբ գեներալ Կուրոպատկինը նշանակվեց մանջուրական զօրքի հրամանատար և Մուկդէնում տեղի ունեցաւ վերջին զինուորական խորհուրդը, Ռուսաստանի պատերազմական ծրագիրները փոխվեցին։ Այդ փոփոխութիւնը բացատրվում է գլխաւորապէս նրանով, որ եապօնացիների ծովի վրա ունեցած աջողութիւններին չը հետևեցին աջողութիւններ ցամաքի վրա։ Օգտվելով դրանից, ռուսները ժամանակ շահեցին, քշեցին իրանց զօրքը դէպի հարաւ և գրաւեցին կարևոր ռազմագիտական կէտեր։ Այժմ ռուսներն ունեն թէ Լեաօդունեան թերակղզու վրա, Պօրտ-Արտուրում, Դալնիում և Ցին-չժուում և երկաթուղու գծի վրա այնքան բաւականաչափ զօրք, որ այդ տեղերը բոլորովին ապահոված են համարում։ Միայն այն երկիւղը, թէ ուտելիքը կարող է չը բաւել, յետ է պահում ռուսներին էլի նոր զօրք ուղարկելու դէպի հարաւ։ Գործողավայր համարվում է Խարբինը»։

(Нов. Время)

Եապօնացի փաստաբաններ։ Ինչպէս յայտնի է, եապօնացիները գրաւեցին ռուսական 13 առևտրական նաւեր, որոնց մէջ 5-ը՝ դեռ պատերազմական գործողութիւնները չը սկսած։ Սասեբում կայացած պրիզային դատարանը ճանաչեց այդ բռնված նաւերը իբրև օրինաւոր պրիզ, չը նայելով, որ 1884 թուի եապօնական օրէնքը թոյլ չէ տալիս պրիզներ անել պատերազմը սկսվելուց առաջ։ Ռուսական նաւատէրերը, իրաւագիտօրէն, իրաւունք ունեն բողոք տալ այդ վճռի դէմ 30 օրվայ ընթացքում։ Սակայն «Daily Mail» լրագիրը հաղորդում է, որ եապօնացի փաստաբանները, «շարժված հայրենասիրական զգացմունքով», վճռել են ամենքը չը պաշտպանել ռուսական շահերը երկրորդ ինստանցիայի դատարաններում։ Եթէ այդ լուրը ճիշդ է, պէտք է ասել, որ ուրեմն եապօնացի փաստաբանները իրանց կոչման բարձրութեան վրա չեն կանգնած։

(Нов. Время)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Սասունի մասին երէկվայ մեր հաղորդած լուրին իբրև բացատրութիւն պէտք է կցել և այն լուրը, թէ Անգլիան և Ֆրանսիան միջոցներ են ձեռք առնում հայերի վիճակը ապահովելու այդ երկրում։

(Пр. кр.)

—Նորերս հեռագիրը հաղորդեց, որ Պարիզում վախճանվել է սենատոր Տրարիէ, ֆրանսիական արդարադատութեան նախկին մինիստրը։ Տրարիէի անունը կապված է Դրէյֆուսի գործի հետ, որ այժմ վերաքննվում է. նա միակն էր սենատօրներից, որ քաջութիւն ունեցաւ պաշտպանել անմեղի դատը և միացնել իր ձայնը Շէրէր-Կեստների ձայնին։ Նա եղաւ և «մարդկային իրաւունքների պաշտպանութեան համար դաշնակցութեան» հիմնադիրներից մէկը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻ

10 մարտի

ՏՕԿԻՕ։ (Ռէյտ. գործ.)։ Երկու ժողովներն էլ որոշեցին նաւատօրմին ջերմագին շնորհակալութիւն յայտնել։ Նրանք համաձայն են պաշտպանելու կառավարութեան ծրագիրը պատերազմական հարկերի առիթով, մտցնելով մի քանի փոփոխութիւններ, որոնցով հարկերի աւելացումից առաջացած եկամուտը մօտ մի միլիոն ֆունտ ստերլինգ կը կրճատվի, միաժամանակ կորոշվի, որ մեծացրած հարկերի գանձման պայմանաժամը պատերազմը վերջանալուց յետոյ՝ չը պէտք է մի տարուց աւելի տևէ, որի շնորհով մեծացրած հարկերի եկամուտները չեն կարող գործադրվել նոր փոխառութիւնը ծածկելու համար։

ԲԼԱԳՕՎԵՇՉԵՆՍԿ։ Կարմիր խաչի տեղական վարչութիւնը ձեռնարկել է քաղաքում հիւանդանոցների շէնքեր կառուցանելու 1,200 հիւանդների և վիրաւորների համար։

ՊԱՐԻԶ։ Ասում են, որ ռուսական մի զինուորական մասնախումբ հսկում է չինական այն զօրքերի վրա, որոնք տեղաւորված են Մանջուրիայի արևմտեան սահմաններում և արևելեան Մոնգոլիայում, որոնց թիւը հասնում է 20,000-ի։ Հսկողութեան նպատակն է որոշել, թէ արդեօք կարելի՞ է վստահել, որ յիշված զօրքերը չէզոքութիւն կը պահպանեն։—Լեաօխէ գետի բերաններում սառոյցը սկսեց հալվել։—Շատ մօտ ապագայում սպասվում է եապօնացիների կողմից յարձակում Նիւ-Չժուանի վրա։

ՏՕԿԻՕ։ (Ռէյտ. գործ.)։ Պարլամենտի անդամ Ակիեման, կառավարութեան դէմ եռանդուն կռիւ մղող լրագրի հրատարակիչը, մեղադրվում է Ռուսաստանի հետ դաւաճանական յարաբերութիւններ պահպանելու մէջ։ Գործը յանձնված է պարլամենտական մասնաժողովի։

ՏՕԿԻՕ։ (Ռէյտ. գործ.)։ Կօրէական կառավարութիւնը վճռեց Իօնամպօն բաց անել առևտրի համար։

ՍԱԼՕՆԻԿ։ Երկու բատալիօն էլ գնացին Ալբանիա. երեք ուրիշ բատալիօններ Մօնաստիրում հրաման ստացան պատրաստվել արշաւելու։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ։ Անգլիական թագաւորն ու թագուհին այստեղ կը ժամանեն մարտի 17-ին։

ՊԱՐԻԶ։ Քրէական գործերի պալատը՝ Դրէյֆուսի գործի առիթով հարցափորձի ենթարկեց առաջին վկային՝ գեներալ Գոնզին։

ՊՕՐՏ-ՄԱՀՕՆ։ Գերմանական կայսրը ժամանեց առաւօտեան ժամը 10-ին և 5-ին մեկնեց։

Կ. ՊՕԼԻՍ։ Իփեկի և Պրիզրէնի նահանգապետներին հաղորդված է, որ անասունների վրա դրված նոր հարկը փոխված է։ Այդպիսով դժգոհ ալբանացիների բոլոր պահանջները կատարված են։ Լիմայի դաշտն ուղարկվեցին պահանջված օգնական զօրքերը։

ԼԻՍՏԻՒ։ Անիշխանական փորձի ձերբակալված մեղաւորներն են երկու ֆրանսիական անիշխանականներ։

ԲԵՐԼԻՆ։ Կրօսս գետի ափերի վրա ծագած ապստամբութիւնը տարածվում է և անգլիական հողերի վրա։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ։ Պետերբուրգի պրոֆէսօր Մարտէնսը կարծիք է յայտնում, որ Դանիան իրան չէզոք պետութիւն յայտարարէ։ Շատ պետութիւններ, մանաւանդ Ռուսաստանը, կը ճանաչէին նրա չէզոքութիւնը։ Այդպիսով Դանիան կը ստեղծէր օրինական հիմք իր բարեկամների միջամտութեան համար, եթէ որ և է մէկը խանգարէր նրա չէզոք պետութեան դրութիւնը։

11 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գվարդիայի հեծեալ թնդանօթաձգային բրիգադայի երկրորդ դիվիզիայի հրամանատար Մեծ Իշխան Սերգէյ Միխայլովիչն գերազանց ծառայութեան համար գեներալ-մայորի աստիճան է շնորհվում։—Վիրաւորեալների համար Ալէքսանդրեան կոմիտէ-

տի դիւանատունը յայտարարում է ի գիտութիւն ընդհանուրի, որ պատերազմի մէջ վիրաւորվածների և նրանց ընտանիքների կարիքների համար դիւանատուն մտնող բոլոր գումարների առանձին հաշիւն է պահվում։ Գումարները յանձնվում են գլխաւոր գանձարանը. ցուցակը հրատարակվում է իւրաքանչիւր շաբաթ։ Նուիրված գումարներով ձեռք կը բերվեն պետական տոկոսաբեր թղթեր։ Ինքն դրամագլուխը և տոկոսները կը ծախսվեն ինչ բանի համար որ յատկացված են—այն է նպաստներ տալու վիրաւորվածներին, նրանց որբացած ընտանիքների անդամներին, այրիներին, որբերին, ծնողներին, եղբայրներին և վերջինների քոյրերին, եթէ նրանք օգնութիւն էին ստանում պատերազմի մէջ սպանվածից. բոլորին, բացի այն նպաստներից, որ կը տրվեն նրանց ընդհանուր հիմունքներով ինվալիդային դրամագլխից։ Յատուկ նպատակ ունեցող գումարները կը մտցնվեն առանձին յօդուածներում և կը ծախսվեն այն անձանց և այն առարկայի համար, որոնց վրա մատնացոյց արած կը լինեն նուիրատուները։—«Правит. Вѣст.» լրագրում տպված է Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնայի Բարձրագոյն հրովարտակը Կայսերական պալատի մինիստր բարոն Ֆրէդերիկսի անունով, որով նրան յանձնարարվում է ընդհանուր հսկողութիւն ունենալ Թագուհի Կայսրուհու առաջարկութիւնները և կարգադրութիւնները կատարելու վրա՝ թեթևացնելով զօրքերի համար պատերազմի խիստ պայմանները՝ ուղարկելով գործող զօրքի համար անհրաժեշտ իրերը։

ԻՐԿՈՒՏՍԿ։ Հաղորդակցութեան ճանապարհների մինիստր իշխան Խիլկովի ճանապարհ ընկնելը Լիսավէնիչնից դէպի Իրկուտսկ և Պետերբուրգ ենթադրվում է մարտի 12-ին։

ԲԵՐԼԻՆ։ Լօնդոնից հաղորդած տեղեկութեան համեմատ, Սէուլ-Իչժու գծի վրա աշխատում են երկաթուղիական զինուորական խմբի երեք հազար զինուորներ։ Եապօնիայում նաւերի վրա բեռնելու համար պատրաստ են հարիւր մղոն բէլսներ բոլոր անհրաժեշտ պատկանելիքներով. նիւթերը հին են, բայց պէտքական են երկաթուղիական գիծը կառուցանելու համար մինչև Պէկնան։ Եապօնացիները աշխատում են զինաթափ անել մինչև 5000 կօրէական զօրքեր։

ՊՐԷՏՕՐԻԱ։ Ժանտախտով հիւանդանալուց մեռաւ մի կաֆը։

ՊԱՐԻԶ։ Տեղեակ աղբիւրից հաղորդում են, որ բանակցութիւնները Ֆրանսիայի և Անգլիայի միջև՝ երկու պետութիւններին վերաբերվող չը լուծված հարցերը կանոնաւորելու վերաբերմամբ այժմ մօտենում են իրանց վախճանին։ Լուրեր են պատում, որ լուծված են Նիւֆաունդլէնդին և արևմտեան-աֆրիկեան կալուածքներին վերաբերեալ հարցերը։ Դեռ ևս չեն աւարտված բանակցութիւնները Եգիպտոսի և Մարոկկոյի առիթով համաձայնութեան վերաբերմամբ։ Ֆրանսիան համաձայնվում է հրաժարվել մի քանի իրաւունքներից Եգիպտոսի վրա, բայց պահանջում է, որ Անգլիան իր կողմից հրաժարվի Մարոկկոյի վրա իր ունեցած պահանջներից։

ԼՕՆԴՕՆ։ Համայնքների ժողով։ Ի պատասխան Հնդկական գործերի պետական քարտուղարի հարցապնդումին Բրոդրիկ յայտարարում է, որ Տիբէթի արշաւանքը շուտով կը շարժվի դէպի առաջ։ Նա պէտք է հասնի Գեանցզէ, որպէս զի հանդիպի չինական կոմիսարին։

—

Առեւտրական - հեռագրական գործակալութիւնից

—

11 մարտի

ԼՕՆԴՕՆ։ Մարկիզ Իտօ յայտնեց, որ կօրէական կայսրը իբր թէ հրաժարվեց քաղաքականութեան մէջ մասնակցութիւն ունենալուց։ Իտօ մտադիր է հիմարկել կօրէական պարլամենտ եապօնականի ձևով։

ԲԵՐԼԻՆ։ «Kreuzzeitung» քննադատելով վերջին անցքերը, կատարելապէս հաւաստիացնում է, որ Ֆրանսիան ոչ մի դէպքում չի մասնակցի Հեռաւոր-Արևելքի պատերազմին։ Նոյնը կարելի կը լինէր ասել Անգլիայի վերաբերութեամբ, եթէ Անգլիայի և Ռուսաստանի մէջ եղած տարաձայնութիւնները վերաբերում լինէին միայն Արևելեան Ասիային։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՈՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԶՂԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնը 9—11 ժ. առաւօտը և 5—7 ժ. երեկոյեան։
Վելիամինովսկայա փողոց, տ. Սաֆարովի, № 13. (չ. ու. կ.) 24—50

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինովսկայա փ. № 16, տուն Եղիազարեանի։ 33—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գր. Տէր-Գրիգորեանց
ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւններին. 154. Միքայէլեան պրոսպէկտ, տելէֆոն 825. (ամեն օ.) 5—105

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներին, ամեն օր առաւօտեան 12—2, երեկոյեան 5—6։ Վեռ Վանքի փողոց, տուն Կուզանովի, Բախչիեվի դեղատան կից։

Կիրակի, մարտի 14-ին, առաւօտեան ժամը 11-ին, Արտիստական ընկերութեան դահլիճում կը կայանայ
Հայոց դրամատիկական ընկերութեան
ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
Պարապմունքի առարկաներն են. 1) Ընկերութեան գործադիր անդամների ընտրութիւն. 2) Համառօտ հաշիւ անցած սեզոնի. 3) Տիկ. Մ. Մակարեանի անվան մրցանակաբաշխութեան յանձնաժողովի 5 անդամի և 2 փոխանդամի ընտրութիւն. 4) Անցած սեզոնների դէֆիցիտը ծածկելու համար երեք աջակից անդամների ընտրութիւն, 1903 թ. նոյեմբերի 9-ի ընդհանուր ժողովի որոշման համաձայն. 5) Առաջիկայ սեզոնին մշտական խումբ հրաւիրելու հնարաւորութեան հարցը. 6) Ընթացիկ գործեր։
Ծանօթութիւն. Եթէ մարտի 14-ին ներկայ չը լինեն բաւականաթիւ անդամներ (ընկերութեան բոլոր անդամների 1/3 մասը), ժողովը չի կայանայ և կը յետաձգվի երեքշաբթի, մարտի 23-ին, երեկոյեան ժամը 8-ին, երբ կայացած կը համարվի՝ որքան անդամներ էլ ներկայ լինեն։ (չ. կ.) 2—3

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ուրբաթ, մարտի 12-ին, Արտիստական ընկերութեան թատրոնական դահլիճում բժշկապետ Ֆ. Մ. Բլիումենտալը կը կարդայ ԵՐԿԻՐՈՒԴ և ՎԵՐՋԻՆ ժողովրդական դասախօսութիւնը հետաքրքիր նիւթի մասին.
Ծովափնեայ բուժարաններ, ամառային գաղութներ եւ ամբուլատորիաներ թոքախտաւորների համար։
Դասախօսութեան ժամանակ ցոյց կը տրվեն բազմաթիւ լուսաւոր պատկերներ։ (Խնդրվում է հեռները բերել տեսարակներ)։
Տոմսակները ծախվում են թատրոնի կասայում։ Տեղերի գները նոյնն են, ինչ որ ցերեկվայ ներկայացումների համար։
Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին։
Արտիստական ընկերութեան կօնցերտի դահլիճում ժամը 10-ից մինչև 5-ը բաց է Հակաթոքախտային ցուցահանդէսը։ (հ. ո.)

ԿԱՊՍԻՒԼՆԵՐ ՄԱՏԻԿՕԻ
(Capsules au Matico)
ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ
Թոյլ է տրված Ռուսաստանում։

Աջողութեամբ գործ է ածվում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբէք չը յոգնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է ածվում Կապայբալզամը հեղուկ ձևով։

—

Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում։
(12 և 19) 1—20

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԻՒՆ
(բարեփոխած)
Գինը 20 կ.
ՈՒՂԵՑՈՑՑ ՏԱՐԱԿԱՆ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ
(վեց դաս)
Գինը 40 կոպէկ
Դիմել. Армавиръ Куб. об. Регенту С. Шаанянцъ. 1—4

Պ. Մանուէլեանի մօտ աւարտած
ՄԻ ՓՈՐՁՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ
(Ընտիր ատտեստատով եւ ըէկոմէնդացիայով)
որոնում է պաշտօն՝ հաշուապահի, օգնականի, գանձապահի (кассиръ), կամ համապատասխան գործերի։
Հասցէն՝ Тифлисъ, Полицейск. ул. № 8. Р. Сантурджіану. ո. կ. 1—2

Լոյս տեսաւ բ. մասը
Անի քաղաքի
ստերէօսկոպիկ պատկերների ժողովածուն բաղկացած 50 պատկերներից, գինը 10 բուբլի։ Ցանկացողները պէտք է դիմեն «Գուտենբերգ» գրավաճառանոցը։ Նոյն տեղը ծախվում են սոյն հրատարակութեան Ա. մասը, նոյնպէս 50 պատկերներից բաղկացած, գինը 10 ր.։ «Ս. Էջմիածին եւ շրջակայքը» 25 ստերէօսկոպիկ պատկերներ.—Էջմիածնի, Ճեմարանի, Զուարթնոց եկեղեցու, Գայիանէի, Հռիփսիմէի, Արարատի և այլ հետաքրքիր տեսարաններից բաղկացած։
Մի և նոյն ժամանակ աւելորդ չենք համարում յայտնել, որ մեր հրատարակած Անի 100 պատկերների կէսից աւելին առաջին անգամն է նկարվում և լոյս աշխարհ հանվում։
4—5 Լուսագրիչ Ա. Վրոյը



ՁԸ ՏԵՍՆՎԱԾ ԷԺԱՆՈՒԹԻՒՆ։ ԿԱՐԴԱՑԷՔ։ «ՎԱՐՇԱՎԱՅԻ ԱՌԻԿՑԻՕՆԸ»։ Վարշավայում, ծախում է չը տեսնված էժան գներով՝ ճանապարհածախսով միասին՝ 6 արժէքաւոր իրեր փոխանակ 25 ր.՝ 8 ր. 50 կ.։ 1) Տղամարդու գրպանի ԺԱՄԱՑՈՅՑ 84 պրօբանի արծաթից՝ ծանր, լաւագոյն կազմով, լարվում է առանց բանալիի և ստուգված է։ 2) Շղթայ՝ արծաթապատ, 3) Պարիզեան կողմնացոյց կամ արծաթէ բրելօկ՝ ըստ ցանկութեան՝ բինօկլ՝ շնորհալի տեսարաններով, 4) 56 պրօբ. ոսկուց մի մատանի, գեղեցիկ աշխատանք, 5) Նիկելից մկրատ կամ գրպանի դանակ արտասահմանեան գործ, 6) Կաշուէ պօրտմոնէ 7 բաժանմունքով՝ մի կողմից մեքենայական կողպեքով, մէջը կաուչուկէ կարքով պատուիրողի անուան և ազգանուան համար։
Կանացի արծաթէ ժամացոյց իր բոլոր պարագաներով և վզի շղթայով՝ 1 բուբլի աւելի թանգ։
Ժամացոյցը ուղարկվում է ստուգված՝ 6 տարի երաշխաւորութեամբ բանելու համար։
Պահանջները կատարվում են անմիջապէս վերադիր վճարով և առանց գրաւականի։
Դիմել „Варшавскому Аукціону“, Варшава, Центральная почта, № 337.

Զրի։ Առանց վճարի։

Յ. Գ. Ամեն մի պատուիրող, որ բերել է տալիս ամբողջ լիովին խումբը առարկաները, իրեւ պրեմիա ստանում է հետևեալ առարկաներից մէկը 1) Մի զոյգ իսկական սատափէ կոճակներ օսլայած շապիքի թեերի համար և ամերիկեան ոսկուց մի բոլոր՝ արհեստական բրլիանտով. 2) Մի զոյգ նիկկելէ քանդվող մոմակալներ՝ գեղեցիկ շինուածքով. 3) Գրպանի էլէքտրական լապտեր. 4) Պօրտսիգար սպիտակ մետաղից՝ վրան քանդակներ. 6) Կանանց գեղեցիկ նեսեսէր։
Գրագրութիւնը ուսերէն։ հինգ. ուրբ. 6—8

ԿՈՎԿԱՍԵԱՆ



ԳԼԽԱՒՈՐ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
Ընկերութեան **ԳՐԱՄՕՖՕՆ** Ռուսաստանում
Թիֆլիս, Գօլովինսկի պրոսպէկտ, Աբեանցի տուն № 7.

Մեծ պահեստ ամենակատարելագործված սալօնական և կօնցերտային գրամֆօնների։				Մեծ պահեստ անշշուկ պլաստինկաների։		
«Մօնարխ»	A փոխանակ	175 ր.	125 ր.	«Գիգանդ» (դիամետր 12).	5 »	
»	B »	150 »	100 »	Գրանտ «Ecstra» . . .	4 »	
»	C »	125 »	80 »	» սովորական . .	2 »	50 կ.
«Հրաշք» փակ, 2 երկու մեծ պլաստինկայի լարված-քով փոխանակ . . .		40 »	30 »	Փոքր «Ecstra»	2 »	— —
«Շտանդարտ» փակ, 2 մեծ պլաստինկայի լարված-քով փոխանակ . . .		60 »	40 »	» սովորական	1 »	20 »
«Գրանդ» փոքր կօնցերտային բուպօրով փոխանակ		100 »	65 »	Տամանիս	10 »	— —

Մեծ քանակութեամբ անշշուկ պլաստինկաների յայտնի և նշանաւոր երգիչների, ինչպէս են.—ռուսաց, վրաց, հայոց, թուրքական, պարսկական, բարբարական, լեհական, Ֆրանսիական, անգլիական, իտալական, գերմանական և ուրիշների։
Մեծ քանակութեամբ բազմազան տեսակներ ռուսական և օտարազգեայ բէպէրտուարի օրկէստրներից ու երգից։

Հին պլաստինկաների փոխելը նորերի հետ տեղի է ունենում հատը հատի հետ—փոքրերին զեղչելով 25 կ.—իսկ մեծ պլաստինկաների համար 50 կոպ.։
Պահեստի խանութում կան մասնաւոր արհեստանոցներ, որտեղ աշխատում են ամենալաւ տեխնիկներ։

Պահեստի խանութում կայ կօնցերտային գրամֆօնային դահլիճ, որտեղ գրամֆօֆօնով հետաքրքրվողները կարող են ամեն օր, բացառութեամբ կիրակի օրերի, առաւօտեան 8½ ժամից մինչև երեկոյեան 8 ժամը լսել ԶՐԻ ԿԵՐՊՈՎ ՆՈՐ ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐ։

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Մեր արտադրութիւնների հետզհետէ աճող պահանջի պատճառով, վերջերս երևացին մեր ապպարատների կեղծուածներ։ Աշխատելով զերծ պահել մեր մշտական կլիէնտներին այնպիսիներին հաւատ ընծայելուց, մենք յայտնում ենք ի գիտութիւն ընդհանուրի, որ մեր ԳՐԱՄՕՖՕՆՆԵՐԸ և ՊԼԱՍՏԻՆԿԱՆԵՐԸ օժտված են ֆաբրիկայի դրոշմով։—«ԳՐՈՂ ՀՐԵՇՏԱԿ» և մենք երաշխաւորում ենք միայն այդպիսիների համար։ Բոլոր ուրիշ ապպարատները և պլաստինկաները, որոնք չունեն վերոյիշեալ «ԴՐՈՇՄԸ», պէտք է ընդունվեն իբրև կեղծուածներ և որոնց չը պէտք է հաւատ ընծայել։

ՕՏԱՐԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ տպրանքն ուղարկվում է վերադիր վճարով նախօրօք գրաւական ստանալուց յետոյ։
Նուիթի հաշուով։ Պօստով ուղարկելը խանութն ընդունում է իր վրա կիսով չափ միայն։

ՈՒՂԱՐԿԵԼԸ դէպի բոլոր երկաթուղու կայարանները եւրօպական Ռուսաստանի սահմաններում (ամառը ի հաշիւ առած ջրային ճանապարհների նաւահանգիստները) կատարվում է խարկով։

Հասցէն՝ նամակների և փողային կօրրէսպօնդէնցիայի համար.—Գօլովինսկի պրոսպէկտ. Աբեանցի տուն № 7։
Հասցէն՝ հեռագրների համար «ԳՐԱՄՕԿՕՄՊԱՆԻԱ» Թիֆլիս։
ՊԱԿԵՐԱՁԱՐԴ ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ և ԿԱՏԱԼՕԳՆԵՐՆ ուղարկվում և տրվում են

Զրի։

Պ.պ. գումարով զնողներին զգալի զիջում։
Գումարով պրէյս-կուրանտներն ուղարկվում են ըստ պահանջման ԱՆՑԱՊԱՂ։ 18—50

Дозволено Цензурою. Тифлисъ, 11-го марта 1904 г. Տպարան «ՀԵՐՄԷՍ» Типографія «ГЕРМЕСЪ» С. Назарянцъ, Мих. пр. № 81.